ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No: 19/14.11.2022

14.11.2022թ.

ք. Երևան

Առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ի դեմս Վ. Գրիգորյանի մի կողմից և «Կոմունալ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն՝ Արամ Խաչատրյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները և կատարել աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ). իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Կապալառուի Աշխատանքները և վճարել դրանց համար:

1.2 Կապալառուն պարտավորվում է կատարել հետևյալ Աշխատանքները

1.2.1 Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում կատարել՝ Հավելված 1-ով նախատեսված աշխատանքները, այսուհետ Աշխատանքներ:

1.3 Աշխատանքների կատարման ժամկետն է՝ <<14>> նոյեմբերի 2022թ. մինչև <<25>> դեկտեմբերի 2022թ.:

1.4 Աշխատանքները կատարված են համարվում Կապալառուի և Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն այմանագրի գինը կազմում է **959 999** /ինը հարյուր հիսունինը հազար ինը հարյուր իննսունինը/ << դրամ, ներառյալ բոլոր հարկերը: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կապալառուի կողմից կատարվելիք՝ բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Պատվիրատուն աշխատանքների գումարը պարտավորվում է վճարել աշխատանքների ավարտական ակտի երկկողմանի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կապալառուն պարտավոր է՝

3.1.1 Հետևել դրանց կատարման պատշաճ որակին, խստիվ հետևել անվտանգության կանոնների պահպանմանը:

3.1.1.1 Անվտանգության կանոնները չպահպանելուց բխող հետևանքների համար պատասխանատվություն է կրում Կապալառուն:

3.1.2 Աշխատանքները կատարել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում.

3.1.3 Պատվիրատուի տրամադրած նախագծային-նախահաշվային (փաստացի կառուցվածի հետ համապատասխանեցված) փաստաթղթերի համաձայն՝ իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով. ինչպես նաև անհրաժեշտ նյութերով և պատշաճ որակով իրականացնել աշխատանքներ.

3.1.4 Աշխատանքների արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին.

3.1.5 Պատվիրատուի պահանջով 15 օրվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները այդ թվում (թաքնված) թերությունները.

3.2 Կապալառուն իրավունք ունի՝

3.2.1 Պատվիրատուից պահանջել սահմանված ժամկետներում կատարել սույն պայմանագրի 2-րդ մասով նախատեսված վճարումները:

3.2.2 Սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամանակացույցով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար Պատվիրատուից պահանջել վճարել տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.05 % չափով:

3.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

3.3.1 ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի Աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

3.3.2 մինչև հանձնման-ընդունման ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կապալառուին վճարելով սահմանված գնի այն մասը. որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը կատարված Աշխատանքների չափին:

3.3.3 Աշխատանքների արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Աշխատանքները հանձնելուց 1 ամսվա ընթացքում.

3.4 Պատվիրատուն պարտավոր է

3.4.1 սահմանված ժամկետներում Կապալառուին վարձատրել սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների կատարման համար.

3.4.2 Կապալառուին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված Աշխատանքների արդյունավետ իրականացման նպատակով.

3.4.3 սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով՝ Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքները, իսկ պայմանագրից Աշխատանքների արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.4.4 Աշխատանքներն ընդունելուց հետո, աշխատանքի արդյունքում պայմանագրից այնպիսի շեղումներ կամ թերություններ հայտնաբերելու դեպքում, որոնք չէին կարող հայտնաբերվել ընդունման սովորական եղանակի ժամանակ (թաքնված թերություններ), այդ մասին հայտնել Կապալառուին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամանակացույցով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար Կապալառուից պահանջել վճարել տույժ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.05 % չափով

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև աշխատանքների վերջնական ավարտի և պայմանագրից բխող պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ գործողությունների ավարտման պահը:

5.2 Պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում հաշվարկները կատարվում են՝ ելնելով կատարված Աշխատանքների փաստացի ծավալից:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի բովանդակությունն ամբողջությամբ համապատասխանում է Կողմերի կամահայտնությանը:

7.2 Եթե սույն պայմանագրի որևէ դրույթ անվավեր ճանաչվի, ապա դրա մյուս դրույթները չեն կորցնում իրենց ուժը:

7.3 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր . իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կապալառու	Պատվիրատու
«Կոմունալ Սերվիս» ՍՊԸ	ՀՀ առողջապահության նախարարություն
Իրավ. հասցե Տավուշի մ., ք. Նոյեմբերյան, Սայաթ-Նովա 25 ՀՎՀՀ 07623373	ք. Երևան. Կառավարական շենք 3 ՀՎՀՀ 02507171
«Ինեկոբանկ» ՓԲԸ	Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՀՀ 2050822080211001	ՀՀ 900011018885
Տնօրեն Ա. Խաչատրյան Կ.Տ.	Գլխավոր քարտուղար Վ. Գրիգորյան Կ.Տ.

Հավելված 1

ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Առողջապահության նախարարության «Պետական առողջապահական գործակալության» գտնվելու վայր՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 10 հասցեում, ջեռուցման խողովակաշարի մասնակի փոխարինում

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չափ. Միավ.	Քանակ	Միավ. գին	Գումար
1	Խողովակ Φ63	մ	120	3880	465600
2	Անցում-միացում	հատ	4	7520	30080
3	Անկյուն 63	հատ	6	1190	7140
4	Եռակողմ	հատ	6	1710	10260
5	Անցում (մետաղական)	հատ	5	1000	5000
6	Անցում 50x1/2	հատ	3	3950	11850
7	Ամերիկանկա 50x1/2	հատ	3	7370	22110
8	Զոդման աշխատանքներ	կետ	6	7000	42000
9	Միացում(Մուֆտ)	հատ	42	790	33180
10	Խողովակի մոնտաժման աշխատանքներ	մ	120	1000	120000
11	Միացման կետ	հատ	8	4000	32000
12	Ընդամենը				779220
13	Ընթացիկ ծախսեր	%	10		77 922
14	Ընդամենը				857 142
15	Շահույթ	%	12		102 857
16	Ընդամենը				959 999

Կապալառու

«Կոմունալ Սերվիս» ՍՊԸ

Իրավ. հասցե Տավուշի մ., ք. Նոյեմբերյան, Սայաթ-Նովա 25
ՀՎՀՀ 07623373

«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050822080211001

Տնօրեն

Ա. Խաչատրյան

Պատվիրատու

ՀՀ առողջապահության նախարարություն

ք. Երևան, Կառավարական շենք 3
ՀՎՀՀ 02507171

Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011018885

Գլխավոր քարտուղար

Վ.Գրիգորյան

Կ.Տ.